

Մելգոնեանի Գոյատեւման Պայքարը Կը Շարունակուի

Դոկտ. Նուրել Պելլերեան



Յունիս 2, 2005-ին Կիպրոսի մէջ դատարան դիմեց Կ.Պոլսոյ Պատրիարքը, Ամեն. Մեսրոպ Արք. Մուրաֆեան, պահանջելով որ դատարանը արգելք ըլլայ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան ապօրինի կերպով փակման այս տարեշրջանի վերջաւորութեան: Ամբաստանտող կողմերն են ՀԲԸՄ Ժընեւ եւ ՀԲԸՄ Նիւ Եորք: Յիշենք որ Կարապետ Մելգոնեան իր համաձայնութիւնը գոյացուցած էր Ժընեւի ՀԲԸՄ-ի հետ:

* * *

Հակիրճ կերպով, ՀԲԸՄի ողորուեալ իր դատակոչով (subpeona) դատարանը այսպէս կը բացատրէ ամբաստանողին օրինական պահանջքը.-

Այսու կու գանք ձեզի տեղեկացնելու թէ Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Մեսրոպ Արք. Մուրաֆեան ձեզի դէմ դատ բացած է Կիպրոս-Նիկոսիոյ դատարանին մէջ, Յունիս 2, 2005 թ. դատակոչի հրահանգով:

Ամբաստանողին պահանջքները հետեւեալներն են.-

ա. Դատարանի հաստատումը թէ Մելգոնեան վարժարանի կալուածները աւանդ (Trust) մըն են Կիպրոսի եւ համայն սփիւռքի Հայութեան ծառայելու համար,

բ. Արգելք դնել որպէսզի Մելգոնեան Կրթ. Հաստատութենէ զատ որեւէ անձ կամ կազմակերպութիւն չկարենայ օգտուիլ նիւթապէս այս հաստատութեան կալուածներէն կամ նիւթական միջոցներէն,

գ. Արգելք հանդիսանայ որեւէ անձի կամ կազմակերպութեան որ կը փորձէ այս Վարժարանը փակել կամ այլ կերպով անոր գործունէութիւնը կաղացնել,

դ. Ամբաստանեալէն պահանջել որ հաստատութեան եկամուտներու եւ մատակարարման նիւթական հաշուետուութիւնը կատարէ,

ե. Ձնջել Մելգոնեանի կալուածի փոխանցումը ամբաստանեալին եւ զայն փոխանցել Կ. Պոլսոյ Պատրիարքարանին որ անոր պաշտպան ըլլայ Կիպրոսի եւ Սփիւռքի Հայութեան անունով,

զ. Այլ որեւէ տնօրինութիւն որ դատարանը յարմար կը դատէ

է. Ծախսեր

Ձեզի կը հրաւիրենք որ 45 օրուայ մէջ ներկայանաք մեզի պաշտպանելու համար ձեր ընթացքը:

Ձեզի կը տեղեկացնենք նաեւ որ եթէ անտեսէք ներկայանալ դատարան, Պատրիարք Հայրը կարող է շարունակել դատը եւ որոշում կրնայ առնուիլ ձեր բացակայութեան:

* * *

Յունիս 7, 2005 թուակիր յայտարարութեամբ Նիկոսիոյ Շրջանային Դատարանի Նախագահ Միխայիլիտու կը ծանուցանէ հետեւեալը.-

- Կ'արգիլենք որ ամբաստանեալները ինչպէս նաեւ որեւէ այլ անձ կամ կազմակերպութիւն Մելգոնեան հաստատութիւնը կամ իր կալուածները օգտագործեն վարժարանի բնական գործունէութենէն զատ որեւէ այլ նպատակաւ, կամ որեւէ ձեւով փորձեն ծախել կամ փոխել կալուածի գործածութիւնը:

- Նաեւ, այս դատարանը կ'արգիլէ որ ամբաստանեալը կամ իր ներկայացուցիչը առնեն որեւէ քայլ որ կրնայ դադրեցնել վարժարանը կամ դժուարացնել անոր գործունէութիւնը:

Ամբաստանեալները կրնան ներկայանալ այս դատարանը Յունիս 17, 2005-ին առարկելու այս դատական որոշումներուն:

Կը հաստատենք նաեւ թէ եթէ ամբաստանեալները անտեսեն այս դատարանի որոշումները, պատասխանատու անձերը կրնան ձերբակալուիլ եւ իրենց կալուածները կրնան բռնագրաւուիլ

* * *

Նոյնպէս Յունիս 7, 2005-ի դատակոչի յայտարարութիւնը կ'ըսէ.-

- Այսու կ'արտօնենք որ դատակոչ ուղարկուի ամբաստանեալ կողմերուն որոնք կը բնակին իրաւական այլ վայրերու մէջ,

- Դատարանը նոյնպէս կը հրահանգէ որ ամբաստանեալները 45 օրուայ մէջ ներկայանան դատարան,

- Եթէ ամբաստանեալները անտեսեն 45 օրուայ մէջ մեզի ներկայանալ, այնուհետեւ այս դատի վերաբերեալ որեւէ այլ հաղորդագրութիւն պիտի յայտարարուի :0 օր դատարանի ծանուցումներուն մէջ եւ պիտի նկատուի օրինական:

* * *

Այսպէսով, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը մահավճիռէ ազատելու ճիգը կը մտնէ նոր փուլի մը մէջ, այս անգամ Կիպրոսի մէջ, ուր դատարանը շատ ատելի կ'ըմբռնէ հարցին լրջութիւնը քան թէ հեռաւոր Գալիֆորնիայի մէջ, ուր «Մելգոնեանի Սաներ եւ Բարեկամներ» կազմակերպութիւնը արդէն առած է քայլեր վերատեսութեան ենթարկելու նախապէս առնուած աննպաստ որոշումը:

Մինչ այդ, անստոյգ աղբիւրներու համաձայն, Եւրոպական երկիրներու մէջ բնակող ազգայիններ նոյնպէս կը ծրագրեն դիմել տեղական դատարաններ, պահանջելու համար Մելգոնեանի շարունակականութիւնը քանի որ ան հիմնուած է համայն Հայութեան ծառայելու համար, եւ այսօր Մելգոնեանը միակ հայկական երկրորդական վարժարանն է բովանդակ Եւրոպական Միութեան մէջ:

Իսկ ի՞նչ է ՀԲԸՄ-ի դիրքը այժմու կացութեան մէջ:

Նախ ըսենք որ ցարդ ՀԲԸՄ-ը ապօրինի քայլ մը չէ առած. ան միայն յայտնած է մտադրութիւնը ապօրինի քայլ մը առնելու, Կարապետ Մելգոնեանի եւ Պուլսոյ Պատրիարքարանին հետ իր համաձայնութիւնը չեղեալ նկատելով Մելգոնեանը փակելու:

Ուստի, այս նոր դատը որ կը բացուի Կիպրոսի մէջ առիթ մը պէտք է ընծայէ որեւէ խորհող անձի որ մաս կը կազմէ ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան, յիշեցնելու համար որ Մելգոնեանը անտէր մնացած որբ մը չէ, այլ աշխարհի չորս ծագերուն ցրուած հայորդիներ պատրաստ են զայն պաշտպանելու համար դիմելու ամէն տեսակի օրինական միջոցներու, եւ հիմա լուազոյն պահն է յետս կոչելու Մելգոնեանը փակելու անմիտ որոշումը որ առնուած էր ով գիտէ ինչ անմիտ պատճառաւ:

Այնքան ատեն որ Մելգոնեանը չէ փակուած, ՀԲԸՄ-ը կարող է նոր որոշումով ուղղութիւն փոխել. ուրեմն ՀԲԸՄ-ը մեծ բարիք մը պէտք է նկատէ որ այս նոր դատի գլխաւոր կէտերէն մին ալ այն է որ վարժարանին գործունէութիւնը չկասեցուի: Նակառակ պարագային, ըստ դատարանի բացատրութեան Կիպրոսի կառավարութիւնը կրնայ բռնագրաւել կալուածները: Իսկ եթէ ՀԲԸՄ-ը յաջողի փակել վարժարանը (երեւակայեցէք, վարժարան փակելը ՀԲԸՄ-ի համար յաջողութիւն պիտի ըլլայ եղեր...) եւ շուտով կրկին վերականգնի իր բարեկամներուն ճիգերուն շնորհիւ որոնք ընկրկելու բնաւ միտք չ'ունին, ՀԲԸՄ-ը բոլորովին կորսնցուցած պիտի ըլլայ վարժարանը վարելու բարոյական իրաւունքը:

Այո՛ հասած է մետասաներորդ ժամը:

Շիմա կ'ուզենք տեսնել թէ ՀԲԸՄ-ի գլուխը ունի՞նք մի քանի լայնախոտի անձեր: